

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

ՈՒՐԲԱԹ, 7 ՀՈՒՆԻՍԻ 2019Թ.
№ 12 (502)



Լրացավ Ակսել Բակունցի 120-ամյակը

Ակսել Բակունցին նվիրված գրական տոն Խարկովում. տեղադրվեց հուշաքար



Ակսել Բակունցի ծննդյան 120-ամյակին ընդառաջ Խարկովի Վ.Դոկուչայեի անվան ազգային ազդարային համալսարանում տեղի ունեցավ հիշարժան իրադարձություն՝ հանդիսավորությամբ բացվեց հուշաքար՝ պատմական հավերժախոս վկայությամբ, որ 1920-1923 թվականներին այդտեղ ուսանել է հայագրի մեծանուն արձակագիր Ակսել Բակունցը՝ ստանալով ագրոնոմի որակավորում:

Ազգանվեր նախաձեռնությունը պատկանում է Խարկովաբնակ մի ընտանիքի՝ ի դեմս Արմեն Թամազյանի, ով նաև հուշակոթողի հեղինակն է, ու Սուսաննա Ղազարյանի, ով, լինելով Վանաձորի Ակսել Բակունցի անվան միջնակարգ դպրոցի եւ տեղի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արժանավոր շրջանավարտը, երկար

տարիներ Խարկովի հայկական կիրակնօրյա դպրոցում հայոց լեզու եւ գրականություն է դասավանդել հայ երեխաներին՝ օտար ափերում վառ պահելով հայ մշակույթի ջահը: Ձեռնարկի իրագործմանն իրենց նպաստն էին բերել նաև Խարկովի հայ հոգեւոր դասի ու հայկական համայնքի ներկայացուցիչները, ԽԱԱՀ-ի ղեկավարությունը՝ ի դեմս ռեկտոր Ա. Ուլյանցենկոյի:

Հուշաքարի բացմանը ներկա էր Խարկովի բարձրատիճան էլիտան, որոնց թվում՝ Խարկովի մարզային խորհրդի նախագահ Ալեքսեյ Չերնովը, Խարկովի տարածաշրջանային պետական վարչության պետի տեղակալ Անատոլի Բաբիչեւը, Խարկովի շրջանի վարչակազմի ղեկավար Յուրի Ռախման, Հայ առաքելական եկեղեցու Ուկրաինայի թեմի առաջնորդ Մարկոս Սրբազանը,

Հայ առաքելական ուղղափառ եկեղեցու «Սուրբ Հարություն» եկեղեցական համայնքի նախագահ Արմեն Բակմանյանը, Ուկրաինայի հայերի միության գործադիր տնօրեն Հովակիմ Հարությունյանը, Խարկովի հայ համայնքի նախագահ Արամյիս Գրիգորյանը, Խարկովի հայ հոգեւոր հովիվը՝ Սուրբ Հարություն եկեղեցու քահանա Տեր Մկրտիչ Գրիգորյանը եւ ուրիշներ: Հուշաքարը բացվեց Խարկովի ազգային ազդարային համալսարանի ռեկտոր Ա.Ուլյանցենկոյի անմիջական մասնակցությամբ, թեմի առաջնորդ Մարկոս Սրբազանի օրհնության աղոթքով:

Հայաստանից՝ Բակունցի ծննդավայր Գորիսից, նույնպես պատվիրակություն էր այցելել Խարկով, որի թվում՝ Գորիսի պետական համալսարանի գիտական քարտուղար, գրականագետ Թեմիմա Մարտիրոսյանը, ՀՀ նկարիչների միության Սյունիքի մասնաճյուղի նախագահ, գեղանկարիչ Ժիրայր Մարտիրոսյանը, գրողի ազգականներից Արմիկ Բակունցը: Հանդիսության պատվավոր հյուրերից էր Ուկրաինայում հայտնի հայագետ, բազմաթիվ հայագիտական ուսումնասիրությունների հեղինակ Իրինա Գայուկը՝ Լվովից: Մոսկվայից հանդիսությանը մասնակցում էր արմատներով Գորիսից, Ռուսաստանի դաշնության գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Մարտիկ

Գասպարյանը, ինչպես նաև Ուկրաինայի հայագրի վաստակավոր գեղանկարիչ, արմատներով Կապանից Գառնիկ Խաչատրյանը՝ Դնեպրից:

Ներկաները բարձր գնահատեցին նախաձեռնությունը՝ համարելով այն հայ-ուկրաինական մշակութային հարաբերությունների սերտացման յուրօրինակ կամուրջ, որ կապում է հայ ժողովրդի նշանավոր գրողն ու Խարկովի ազդարային համալսարանի շրջանավարտը՝ Ակսել Բակունցը: Ինչպես իր խոսքում նշեց ԽԱԱՀ-ի ռեկտոր Ուլյանցենկոյն՝ պատահական չէ, որ այդ կարեւոր իրադարձությունը տեղի է ունենում հենց շրջանավարտների խորհրդանշական օրը, ինչը նշանավորվեց նաև հայագրի գրողի՝ Խարկովի ազդարային համալսարանի երբեմնի տաղանդավոր շրջանավարտը լինելու պատմական փաստով եւ գրեթե 100 տարի անց դրա փառահեղ վկայակոչմամբ:

Հուշաքարի բացմանը հաջորդեցին համալսարանի 203-ամյա պատմությունը ներկայացնող թանգարանում Բակունցին նվիրված ցուցափեղկի բացումը, թանգարանի տնօրեն Ելենա Գուլկովայի բովանդակալից ելույթը ու ներկաների ջերմ տպավորությունների փոխանցումը: Համալսարանի արխիվից առաջին անգամ թանգարանում ցուցադրվեց 1923թ. ավարտական փաստաթուղթը, որը վկայում է Ակսել Բակունցի՝

էջ 6

Ա.Բ.-ին

...Եվ բառերի համար քո մարմարյա, Հնամենի, բուրյան, որպես մեր հին Քարաքանդակ անդուռ մատուռների Անջընջելի գրերն հնադարյան, — Եվ մյուռոնի ճման սրբազնագույն Քո երգերի մաքուր սկիհներում պահված՝ Խորհուրդների համար մշտահըմա, Որպես խորհուրդը մեր նաիրական ոգու, — Քո «Միրիավի» համար— եւ լուսեղեն՝ Արփենիկի հուշով սրբագործված հավետ, «Ալփական ծաղկի» այն բուրավետ, Որ բուրելու է հար անմյութեղեն, — Եվ վերջապես քո վեհ, հերոսական «Սերմնացանի» համար, որ ձեռքերով վսեմ Սեւ ցելերի վրա մեր գոյության այս սեւ, Շաղում է շողք ու սերմ անանձնական, — Այս ամենի համար, — եւ «Ծիրանի» Հազարամյա փողի՝ համար քո այն, Որ դարերով տենչած խաղաղության երգն է հնչում, — եւ մեր ժողովուրդը քանի Ունի գեթ ափ մի հող արեգակի ներքո՝ Հնչելու է երգեր եղբայրական, — Այս ամենի համար, օ՛, խեղճ իմ բարեկամ Ես քեզ օրհնում եմ արդ իմ անաղարտ երգով... Այս ամենի համար, — եւ քո եղբրական Տառապանքի համար, որ արդ կրկին Վեհություն է խառնում քո անաղարտ երգին— Ես քեզ պարզում եմ ձեռք եղբայրական... Եվ ներբողում եմ քեզ ահա կրկին անեղծ Իմ շուրթերով, ինչպես օրեր առաջ, — Երբ դեռ դու ա՛յր էիր մի անարատ, Եվ ես ընկերն էի քո բանաստեղծ... Եղիշե Չարենց 1936

«Ակսել Բակունցը որպես անխարդախ ժողովրդայնության առաջամարտիկ խորհրդահայ գրականության մեջ» աշխատությունը

1959թ. ԳՖՀ-ի Սյունիքեն քաղաքում լույս է տեսել գրականագետ Լեւոն Սկրտչյանի «Ակսել Բակունցը որպես անխարդախ ժողովրդայնության առաջամարտիկ խորհրդահայ գրականության մեջ» աշխատությունը: Այդ մենագրությունը նախապես հոդվածի ձևով նախատեսված է եղել հրատարակել ԽՍՀՄ ուսումնասիրության ինստիտուտի կողմից հրատարակվող «Կալկազիան Ռեւու» անգլերեն հանդեսի համար: Այսինքն, որպես ընթերցող նկատի էր առնված իրականության մանրամասնություններին անձանոթ օտարագրի մտավորականությունը, որն էլ իր դրոշմն է դրել գործի ընդհանուր շարադրանքի եւ ոճի վրա:

Հեղինակը ձգտել է, ըստ էության, ճշմարտացի դրսեւորումներով ցույց տալ Ակսել Բակունցի գործունեության իրական պատկերը՝ վերհանելով նրա ստեղծագործության գլխավոր հատկանիշը՝ ժողովրդայնությունը եւ ջանալով բնորոշել նրա աշխարհայացքի հիմնական կողմերը:

Աշխատության մեջ, Բակունցին անմիջապես վերաբերող նյութերից բացի, օգտագործված են խորհրդային ընդհանուր եւ գրական-մշակութային միջավայրն արտացոլելու անհրաժեշտ նյութեր:

Այս մենագրության նպատակն է եղել նաև թարմացնել Բակունցի լուսավոր հիշատակը՝ նրա ողբերգական մահվան քսանամյակի առթիվ:

էջ 6

«Իմ քայլը հանուն Սյունիքի մարզի» բիզնես համաժողովը

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը մայիսի 27-ին մասնակցել է «Իմ քայլը հանուն Սյունիքի մարզի» ներդրումային բիզնես ծրագրերի համաժողովին ու տեղական արտադրանքի EXPO ցուցահանդեսին, որին մասնակցում են նաև փոքր, միջին եւ խոշոր բիզնեսի ներկայացուցիչներ, ներդրողներ, օտարերկրացի գործարարներ, ֆինանսական կառույցների ներկայացուցիչներ եւ այլք:

Ողջունելով համաժողովի մասնակիցներին՝ Նիկոլ Փաշինյանը նշել է. «Սյունիքի մեծարժույթ մարզայնացիներ, կառավարության հարգելի անդամներ, Ազգային ժողովի հարգելի պատգամավորներ, մարզպետներ, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, լրագրողներ, հյուրեր:

Իրականում ճանապարհին մտածում էի, թե որ տարբերակով սկսեմ իմ ելույթը, որովհետև մի քանի տարբերակ էի մտածել, բայց դուք ձեր խոսքով կանխորոշեցիք՝ խոսելով խենթ գաղափարների մասին: Այն, ինչ տեղի է ունենում Հայաստանի Հանրապետությունում՝ հենց մեծ բանավեճն է խենթության եւ իրատեսության միջև: Մեր քաղաքական խնդիրն է՝ Հայաստանի Հանրապետությունը դարձնել մի այնպիսի մարդկանց երկիր, ովքեր հավատում են իրենց ուժերին, ովքեր գիտեն, որ այդ գաղափարները կարելի է իրագործել Հայաստանի Հանրապետությունում:

Այս ամենն ընդամենը հայտարարությունն է, որովհետև այն, ինչ տեղի է ունեցել Հայաստանում եւ այն, ինչ շարունակում է տեղի ունենալ, ըստ էության այս գաղափարի իրագործումն է: Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացումը պետք է հենվի անհատական ջանքի վրա՝ կապ չունի, թե ինչ մակարդակի ջանք է դա, որովհետև այն, ինչ մենք ունենք իրականում, նախ ունենում ենք որպես գաղափար: «Տաքետեր»-ը, որը Հայաստանի ամենագեղատեսիլ վայրերից մեկն է, մի խումբ մարդկանց գաղափար է: Եվ մեր մեծագույն խնդիրը Հայաստանի Հանրապետությունում հնարավորինս շատ մարդու ստեղծագործելու, մտածելու, երազելու եւ այն իրագործելու համարձակությամբ օժտելն է:

Այս մարզային ֆորումները հենց այդ նպատակին են ծառայում, որպեսզի այդ ուղերձը հղենք բոլոր մարզերի բնակիչներին, որովհետև տնտեսական զարգացումը հենվում է առաջին հերթին անհատների վրա: Իհարկե, շատ կարելի է խոշոր ներդրողների մուտքը Հայաստանի Հանրապետություն, բայց իմ համոզմամբ նրանք առաջին հերթին գնում են տաղանդավոր մարդկանց հետեւից: Մեր խնդիրն է ցույց տալ, որ Հայաստանում ապրում են տաղանդավոր մարդիկ, ովքեր կարողանում են միջավայր ստեղծել ուրիշների երազանքների իրականացման համար: Ողջունում եմ այսօրվա համաժողովը եւ հաջողություն եմ մաղթում բոլորիս մեր այս կարելի առաքելությունն է կատարածելու գործում: Հայաստանի Հանրապետությունում ապրում են տաղանդավոր մարդիկ, մեր խնդիրն է այնպես անել, որ նրանք հավատան եւ հաղթեն»:

Ներդրումային համաժողովի նպատակն է Սյունիքի մարզի տնտեսության եւ համայնքների զարգացման գործընթացներին ներգրավել Հայաստանում ու արտերկրում ձեռնարկատիրություն իրականացնող եւ բիզնես շահեր հետապնդող գործարարներին: Այն ուղղված է ներդրումային միջավայրի ակտիվացմանը, բիզնես ոլորտում նորանոր, փոխազդեցիկ գործակցային կապերի հաստատմանը:

Համաժողովի շրջանակում ներկայացվում են Սյունիքի մարզի ներդրումային գրավչությունը եւ ներուժը, արդեն հաջողություն գրանցած ու ընթացքի մեջ գտնվող բիզնեսի օրինակներ, գրավիչ ներդրումային ծրագրեր, որոնց թիվը հասնում է 20-ի:

Բացվել է նաև տեղական արտադրանքի EXPO ցուցահանդես: Վարչապետ Փաշինյանը շրջել է ցուցահանդեսով՝ ծանոթացել մարզի տեղական արտադրությանը:



Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ամփոփել է «Իմ քայլը հանուն Սյունիքի մարզի» ներդրումային բիզնես ծրագրերի համաժողովի աշխատանքները:

Մասնավորապես, վարչապետը շնորհավորել է համաժողովի մասնակիցներին դինամիկ ֆորում անցկացնելու կապակցությամբ եւ արձանագրել մի քանի առանձնահատկություններ քննարկումներից:

«Առաջինը՝ մենք տեսանք, որ Սյունիքի մարզում իսկապես շատ մեծ պոտենցիալ կա: Այստեղ մենք տեսանք առաջարկներ եւ նույնիսկ գործունեություն, որը վերաբերում է տեխնոլոգիական ոլորտին, այստեղ տեսանք հետաքրքիր, գյուղատնտեսական, զբոսաշրջային ծրագրեր: Այստեղ, իսկապես, շատ կարելի է, որ մենք կարողանանք ստեղծել թե՛ օրենսդրական, թե՛ կառուցակարգային, թե՛ բարոյահոգեբանական այնպիսի միջավայր եւ պայմաններ, որպեսզի մարդը ոգևորվի իր աշխատանքից եւ ուրիշներին ոգևորի աշխատել: Առանց աշխատանքի հնարավոր չէ որեւէ հարց լուծել, առանց աշխատանքի հնարավոր չէ բարեկեցություն ստեղծել, եւ սա ամենակարեւոր արձանագրումն է:

Մենք պետք է իրար վարակենք աշխատելու ցանկությամբ, աշխատելու էներգիայով, մենք պետք է հավատանք մեր ապագային, որովհետև այն մեր ձեռքերում է, որովհետև մեր ապագային հավատալ՝ նշանակում է ինքներս մեզ հավատալ: Ես համոզված եմ, որ այսօր Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի պետք է հավատա առաջին հերթին ինքն իրեն: Մեր ընդդիմադիր ժամանակներից այդ դիսկուրսը կա. ընդդիմությանը հավատում եմ, չեն հավատում, իշխանությանը հավատում եմ, չեն հավատում: Առաջին հերթին մարդը պետք է հավատա ինքն իրեն, իր ստեղծարար ուժին եւ մեր առաքելությունն այն է, որ մենք պետք է ոչ թե գործենք այնպես, որ մարդիկ մեզ հավատան, մենք պետք է գործենք այնպես, որ մարդիկ իրենք իրենց հավատան, որովհետև իրենք իրենց հավատալով է, որ ամեն անգամ իրենք կարողանան էֆեկտիվ կառավարություն ստեղծել, էֆեկտիվ Աժ ձեւավորել, էֆեկտիվ տեղական ինքնակառավարման մարմիններում լինել: Մեր մեծագույն առաքելությունն այն է, որ մարդիկ՝ ՀՀ քաղաքացիները, հավատան իրենք իրենց: Այն պահին, երբ որ մենք հավատում ենք մեր քաղաքացիներին, մեր ժողովուրդը հավատում է ինքն իրեն, ինքը հաղթում է:

Մեր ժողովրդի, մեր պետության, մեր քաղաքացիների հաղթանակի միակ գրավականն այն է, երբ ամեն քաղաքացի եւ ժողովուրդը հավաքականություն է, ինքն իրեն հավատում է: Ես ուրախ եմ, որ այս դահլիճից, այս բեմից մենք տեսանք բազմաթիվ մարդիկ, ովքեր առաջին հերթին հավատում են իրենք իրենց: Մեր ամենօրյա առաքելությունն է, որպեսզի այդ մարդիկ իրենց ամեն օրվա հետ, ամեն ժամի, ամեն շաբաթվա հետ ավելի ու ավելի շատ հավատան, որովհետև ինչքան իրենք իրենց են հավատում, այնքան ավելի շատ հավատում են մեր ընդհանուր հայրենիքի այսօրվան եւ ապագային, որը մենք իրար հետ քայլ առ քայլ կառուցում ենք եւ կառուցելու ենք: Մեզ բոլորիս եռանդ եմ մաղթում եւ բոլորիս լավատեսություն եմ մաղթում եւ որեւէ կասկած չկա, որ ՀՀ քաղաքացին իր հաղթարշավը շարունակելու է եւ դա ավարտ այլեւս չի ունենալու: Ամեն նոր հաղթանակից հետո մենք նոր հաղթանակ ենք պատրաստելու եւ կերտելու, որովհետև դա մի աստիճան է, ամեն աստիճան ոտք դնելը մեր նախապատրաստությունն է մյուս աստիճանին ոտք դնելու: Այնպես որ մեր քայլը ոչ թե պետք է լինի ուղղակի առաջ, այլ նաև դեպի վերընթաց:

Այսօր իմ քայլը հանուն Սյունիքի մարզի եւ համոզված եմ, որ մեզանից յուրաքանչյուրն արել է, անում է եւ կանի իր քայլը հանուն Սյունիքի մարզի, հանուն Հայաստանի Հանրապետության, հանուն Արցախի Հանրապետության:

Շնորհակալություն»:

Սյունիքյան իրականության հեր առերեսվելը հեղափոխության թիվ 1 հրամայականն է (հարցազրույցի հրավեր Նիկոլ Փաշինյանին)

Մեծարգո պարոն վարչապետ

Տեղյակ ենք, որ Սյունիքում կազմակերպվող բիզնես-ֆորումին մասնակցելու համար մայիսի 27-ին ժամանում եք մարզ:
Դա Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնում Ձեր երրորդ այցն է, ինչը ողջունում ենք:
Նախորդ այցերի ժամանակ նույնպես, օգտվելով առիթից, Ձեր ուշադրություն ենք հրավիրել սյունիքյան հիմնախնդիրների վրա, բայց ինչ-ինչ պատճառով չեք պատասխանել այդ հարցերին:
Այս անգամ էլ նպատակահարմար գտանք Ձեզ հրավիրել հարցազրույցի՝ նախապես ուղարկելով հարցաշարը, որ ներկայացնում ենք ստորև:
Հարցազրույցի գաղափարը գուցե եւ չծնվեր, եթե Դուք մինչ

այսօր անդրադարձած լինեիք այդ մտահոգություններին:
Ահա եւ հարցերը, որոնք մեծամասամբ «Սյունյաց երկրի» կողմից նախկինում Ձեզ ուղղված հարցերի կրկնությունն են:

1. Թավշյա հեղափոխությունը շատերի ընկալմամբ, նախաժառանգ, հանրության ազնիվ պոռթկումն էր հանուն մարդու իրավունքների եւ ազատությունների, ընդդեմ պետական պաշտոնյաների կամայականության:
Սյունիքի նախկին մարզպետը բազմաթիվ մարդկանց աշխատանքից ազատել է՝ բացառապես իր անձնական քննադատության հիմամբ, Հայաստանի Հանրապետության օրենքները չընդունելով:
Իրենց ուրտներում եւ իրենց մասնագիտության մեջ համ-

բավ ունեցող, մարզում համընդհանուր հեղինակություն վայելող այդ մարդիկ հեղափոխությունից մեկ տարի անց անգամ չեն կարողանում վերականգնել իրենց ոտնահարված իրավունքները:
Կառավարման համապատասխան առյուծանքի պատասխանատուները մեկ տարվա ընթացքում չհանդգնեցին առերեսվել իրականության հետ, չհամարձակվեցին մարդկանց իրավունքները վերականգնել վարչական ճանապարհով, այլ բոլորին ուղարկեցին դատարան, որտեղ էլ չի երեւում առապելական քաջքուլի վերջը:
Մինչ այդ՝ Սյունիքի պատիվ բերող այդ կադրերն ու մասնագետները շարունակում են կրել նյութական եւ բարոյական զրկանքներ՝ զրկված մնալով իրենց
էջ 4

«Եկե՛ք Սյունիք, ներդրե՛ք Սյունիքում, միասին զարգացնենք Սյունիքը»․ կոչ արեց Հունան Պողոսյանը



Յուրիս խոսքերով:
Նիկոլ Փաշինյանը մասնավորապես ասաց. «Մեր քաղաքական խնդիրն է Հայաստանի Հանրապետությունը դարձնել մի այնպիսի մարդկանց երկիր, ովքեր հավատում են իրենց ուժերին, ովքեր գիտեն, որ այդ գաղափարները կարելի է իրագործել Հայաստանի Հանրապետությունում: Այս ամենն ընդամենը հայտարարությունն է, որովհետեւ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացումը պետք է հենվի անհատական ջանքի վրա՝ կապ չունի, թե ինչ մակարդակի ջանք է դա, որովհետեւ այն, ինչ մենք ունենք իրականում, նախ ունենում ենք որպես գաղափար: «Տաքելներ»-ը, որը Հայաստանի ամենագեղատեսիլ վայրերից մեկն է, մի խումբ մարդկանց գաղափար է: Եվ մեր մեծագույն խնդիրը Հայաստանի Հանրապետությունում հնարավորինս շատ մարդու ստեղծագործելու, մտածելու, երազելու եւ այն իրագործելու համարձակությամբ օժտելն է: Այս մարզային ֆորումները հենց այդ նպատակին են ծառայում, որպեսզի այդ ուղերձը հղենք բոլոր մարզերի բնակիչներին, որովհետեւ տնտեսական զարգացումը հենվում է առաջին հերթին անհատների վրա: Իհարկե, շատ կարևոր է խոշոր ներդրողների մուտքը Հայաստանի Հանրապետություն, բայց ոչ համոզմամբ նրանք առաջին հերթին գնում են տաղանդավոր մարդկանց հետեւից: Մեր խնդիրն է ցույց տալ, որ Հայաստանում ապրում են տաղանդավոր մարդիկ, ովքեր կարողանում են միջավայր ստեղծել ուրիշների երազանքների իրականացման համար: Ողջունում են այսօրվա համաժողովը եւ հաջողություն են մաղթում բոլորին մեր այն կարներ առաքելությունն ի կատար ածելու գործում: Հայաստանի Հանրապետությունում ապրում են տաղանդավոր մարդիկ, մեր խնդիրն է այնպես անել, որ նրանք հավատան եւ հաղթեն»:

Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը, շնորհակալություն հայտնելով հիանալի մտահոգման հեղինակներին, նրա կազմակերպման աշխատանքներում ջանք ներդրած բոլորին, մեջ. «Մարզային իշխանությունները կարող են եւ պետք է կապող օղակ դառնան գործարարների, պետական կառույցների, բիզնես գաղափարներ ունեցողների միջև: Երաշխավորելով, որ նոր ձեռնարկների իրագործման ճանապարհին չեք հանդիպելու ավելորդ վարչարարության, բյուրոկրատական քաջքուլների, որքեւ բացասական իրողության, որը կխանգարի ձեր ներդրումների հա-

մար ամուր հող ստեղծելուն, երաշխավորելով, որ տեսնելու եք միայն բարի կամեցողություն եւ օժանդակություն: Անդրադառնալով Սյունիքի տնտեսական ներուժին, հետագա զարգացման հնարավորություններին ու ներդրումային միջավայրի առանձնահատկություններին՝ մեզն, որ մեզ համար մարզի տնտեսական զարգացման գերակա ուղղություններն են զբոսաշրջությունը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունն ու տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը: Հենց այս ճյուղերին են վերաբերելու այստեղ ներկայացվող ծրագրերը: Կոչ են անում լինել հնարավորինս ակտիվ, հանդես բերել նախաձեռնողականություն, օգտվել այս հարթակից եւ ձեր քայլն անել հանուն Սյունիքի մարզի: Եկե՛ք Սյունիք, ներդրե՛ք Սյունիքում, միասին զարգացնենք Սյունիքը»:

Ցուցադրվեց տեսաֆիլմ Սյունիքի վաղվա օրվա տեսլականի մասին, առանձին էլույթով ներկայացվեցին մարզի տնտեսական կյանքի վերլուծությունն ու ցուցանիշները, այդ ոլորտի առանձին ճյուղերին առնչվող տեղեկությունները:

Այնուհետեւ կազմակերպվեց մարզի տնտեսական զարգացման վերաբերող պանելային քննարկում՝ գործադիր, օրենսդիր մարմինների ու բիզնեսի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Համաժողովի ընթացքում ներկայացվեցին Սյունիքի մարզի ներդրումային գրավչությունը եւ ներուժը՝ արդեն հաջողություն գրանցած եւ ընթացքի մեջ գտնվող բիզնեսի օրինակներ, իրատեսական ներդրումային ծրագրերի գաղափարներ (ընդհանուր՝ 25 ծրագիր):

Իբրեւ այդ ամենի տրամաբանական շարունակություն՝ ներդրողների եւ բիզնես-ծրագրեր ունեցողների միջեւ կնքվեցին համագործակցության մի քանի հուշագրեր:

EXPO ցուցահանդեսով ներկայացվեց Սյունիքի մարզի տեսլական արտադրանքը, որի տաղավարում Սյունիքի մարզպետի ուղեկցությամբ շրջեցին ՀՀ վարչապետն ու հյուրերը:

Համաժողովն իրենց էլույթներով ամփոփեցին Նիկոլ Փաշինյանն ու Հունան Պողոսյանը:

«Իմ քայլը հանուն Սյունիքի մարզի» համաժողովի գործընկերներն էին «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն, «Քննություն գլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ-ն, «Մարիլա» ՍՊԸ-ն, «Արմենիան հելիքոփթերս» ՍՊԸ-ն: Վեջիսն նաեւ հենց տեղում իր ուղարկումների ցուցադրական թռիչքներ կազմակերպեց:

syunik.mtd.am

Բիզնես-ֆորում Սյունիքում. կնքվեցին համագործակցության հուշագրեր, որոնք կապ չունեն մարզի հիմնախնդիրների հետ

Մայիսի 27-ին կայացած «Իմ քայլը հանուն Սյունիքի մարզի» ներդրումային բիզնես- ֆորումում ներդրողների եւ բիզնես ծրագիր ունեցողների միջեւ ստորագրվեցին մի քանի հուշագրեր:

Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության նախագահ Կարեն Վարդանյանը նախ ներկայացրեց Սյունիքում առաջատար տեխնոլոգիաների զարգացման հեռանկարները, դրա շնորհիվ ստեղծվող աշխատատեղերի քանակը եւ սպասվելիք տնտեսական օգուտը, այնուհետեւ նա ու մոսկվայաբնակ գործարար Արամ Ստեփանյանը հուշագիր ստորագրեցին. Կապանում «Արմաթ» լաբորատորիա կունենա 20 դպրոց: Կարեն Վարդանյանի փոխանցմամբ՝ առաջիկա վեց տարում Հայաստանում տեխնոլոգիական աշխատուժի ստեղծման ծրագիր է իրագործվելու, նպատակը՝ ստեղծել տեխնոլոգիական 150 ձեռնարկություն՝ ընդհանուր 75 մլրդ դրամ շրջանառությամբ:

Սյունիք գործարար կնքվեց Սոչիում բնակվող գործարար Միշա Մարտիրոսյանի եւ Կապանի ու Գորիսի համայնքապետերի

միջեւ՝ Գորիսում ձկնաբուծարան, Կապանում խոզաբուծական տնտեսություն կառուցելու վերաբերյալ:

Կապանում նախատեսվում է նաեւ հեռուստացույցներ արտադրել, համեմայն դեպս հաջող ստորագրված հուշագիրն իրանական կողմի եւ հայկական «Դոսուզ» ընկերության տնօրեն Տիգրան Աթայանի միջեւ էր՝ Կապանում իրանական «Էլավիա» հեռուստացույցների արտադրություն հիմնելու մասին:

Ծրագրեր են նախատեսվում նաեւ Սիսիանի տարածաշրջանում: Մասնավորապես, հուշագիր ստորագրվեց «Սիսեկո» ընկերության եւ Սիսիանի համայնքապետարանի միջեւ՝ օրգանական սառը թեյերի գործարան կառուցելու նպատակով հողահատկացում կատարելու մասին: Հուշագիրը ստորագրել են «Սիսեկո» ընկերության հիմնադիր Կարեն Ստեփանյանը եւ Սիսիան համայնքի ղեկավարը:

Համագործակցության հաջորդ հուշագիրը ստորագրվեց «Թոնիր հարսանեկան գյուղ» նախաձեռնության համահեղինակ Հայկ Երանոսյանի հետ: Հայկը եւ նրա կինը՝ Սիրարփի

Խոջաբաղյանը նախատեսում են Սիսիանի Վաղատին բնակավայրում ստեղծել «Հարսանեկան գյուղ»:

Մարզի չորս համայնքում գիվլայնի չորս պայմանագիր է կնքվել «Հայիդրոնախագիծ» ինստիտուտի (տնօրեն՝ Արզան Ջուլիանյան) եւ ուկրաինական մի ընկերության միջեւ՝ 700 հազար ԱՄՆ դոլարի շրջանակում:

Եվ, այդուհանդերձ, խոսք չեղավ չմշակող վարելահողերի (մարզում առկա վարելահողերի 60 տոկոսը չի մշակվում), արտադրարների չօգտագործման, գյուղապահպանության, բնապահպանության, ինչպես եւ գյուղմթերքների, մասնավորապես բրդի եւ ոչխարի մորթու մշակման մասին, ինչպես նաեւ հիդրոէներգետիկայի ու հանքարդյունաբերության մասին, որոնց զարգացման նպատակով պայմաններ կան Սյունիքի մարզում: Խոսք չեղավ նաեւ Սեդրու ազատ տնտեսական գոտու մասին, որտեղ, իբր, դեռեւս անցած տարվանից, պետք է կատարվեր մի քանի հարյուր միլիոն դոլարի ներդրում. նախորդ կառավարությունն էր այդ մասին բազմիցս հայտարարել:

Վահրամ Օրբեյան

Ակսել Բակունցին նվիրված գրական փոն Խարկովում. փեղադրվեց հուշաքար



էջ 1 Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտի (հիմա՝ ԽԱԱՀ) շրջանավարտը Լինելու բարեշահ փաստը:

Յրավիրված էր նաև կլոր սեղան, որն ուղեկցվեց մեծարման ելույթներով, Բակունցի կյանքի ու ստեղծագործության շուրջ թեմատիկ զեկուցումներով, բազմաթիվ շնորհակալագրերի ու հուշանվերի հանձնմամբ, ուղերձների ներկայացմամբ: Համալսարանի ղեկավարությանն ու Թամազյան ընտանիքին շնորհակալագրեր փոխանցվեցին Հայաս-

տանի գրողների միության, Հայաստանի գյուղատնտեսության նախարարության, Գորիսի պետական համալսարանի, Գորիսի համայնքապետարանի, Ռուսաստանի արվեստի ակադեմիայի, հայկական այլ կառույցների ու կազմակերպությունների, ինչպես նաև անձամբ Բակունցի ընտանիքի՝ նրա թոռնուհիներ Ալլա ու Իրինա Բակունցների կողմից:

Միջոցառման մասնակիցները համայն հայության անունից երախտագիտություն հայտնեցին Թամազյան ընտանիքին, Խարկովի

հայ հոգեւոր դասի ներկայացուցիչներին, խարկովաբնակ հայերին, Բակունցի ուսանած համալսարանի ղեկավարությանը՝ ի դեմս ռեկտոր Ա.Ուլյանցեւնկոյի, պրոռեկտոր Ս.Վասիլիշինի, ովքեր ամենայն սիրով ու պատրաստակամությամբ ողջունեցին մշակութամեր գաղափարը եւ ամեն կերպ աջակցեցին դրա իրականացմանը՝ ի նշան երկու երկրների բարեկամության, Խարկովի հայ համայնքի հետ կապերի ամրապնդման:

Բացառիկ նվիրումի ու համատեղ ջանքերի

արդյունքում հեռավոր Խարկովում՝ իր ուսանած բուհի երկրորդ մասնաշենքի կենտրոնական մուտքի դիմաց հուշաքարի տեսքով այսուհետ հազարավոր ուսանողներին կողջունի Ակսել Բակունցի իմաստուն հայացքը՝ մնայուն գրով առ այն, որ հայ ժողովրդի մեծամուն գավակն է եւ այդ տարաշխարհիկ, բայց սիրելի կրթօջախի արժանավոր շրջանավարտը:

Նոննա Միրզոյան

«Ակսել Բակունցը որպես անխարդախ ժողովրդայնության առաջամարտիկ խորհրդահայ գրականության մեջ» աշխատությունը



Արմեն Կարապետյան Պապական գիտությունների թեկնածու, ՀՀ ՉԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

էջ 1 Լ. Սկրտչյանը ի սկզբանե մերժում է խորհրդային գրականության մեթոդաբան և բնավ չի ձգտում փորձել մարքսիզմ-լենինիզմի դասականների խառնիխուռն երկերը, որպեսզի այնտեղից քաղած զանազան մեջբերումներով հաստատի կամ հերքի գրականագիտական այս կամ այն դրույթը: Ինչո՞ւ: Որովհետև նախ՝ չի հավատում, թե մարքսիզմ-լենինիզմի դասականներն այնքան զերբնական ու ամենագետ են եղել, որ կարողանային սպառիչ խորությամբ հետազոտել մարդկային ճանաչողության բոլոր ոլորտներն անխտիր:

Եվ երկրորդ. որովհետև մտածման ազատությունն ի բնե չի ճանաչում հավիտենապես պարտադիր գիտական հեղինակություններ, նույնիսկ ամենից հանճարեղներին, որոնց կուրորեն հետեւելն անխուսափելիորեն հասցնում է ստեղծագործական անլույսի և մշակութային լճացման:

Երրորդ գլխում («խորհրդահայ գրական սերնդի երկու կարկառուն դեմքերը- Եղիշե Զարենց եւ Ակսել Բակունց») զուգահեռի վրա դնելով Զարենցի եւ Բակունցի կերպարները, հեղինակը նշում է, որ այս երկու անհատականությունն անպայման բարձրանում են մյուսներից եւ առաջին հերթին իրենց տաղանդով ու ստեղծագործության որակով: Դրանից գատ, նրանք «աչքի են ընկնում իրենց բացառիկ անհատականութեամբ, համարձակութեամբ, միշտ կատարելագործելու բուռն ձգտումով եւ շրջապատի վրայ թողած խորունկ ազդե-

ցութեամբ»:

Այդ ամենով հանդերձ, ըստ հեղինակի, Զարենցն ու Բակունցը տարբեր էին միմյանցից անհատական խառնվածքով եւ գրական ըմբռումներով ու գրական-հասարակական շատ խնդիրներում ուղղակի հակոտնյա դիրքերի վրա էին:

Սակայն տարիների ընթացքում նրանք աստիճանաբար մոտեցան. «սնկը միսսին աւելի լաւ հասկացաւ, եւ մի շարք առանցքային խնդիրներում իրար գտան ու փոխադարձաբար խանդավառեցին»: Վերլուծելով երկու մեծերի ստեղծագործական ուղիներն ու մեթոդները, հեղինակը նշում է, որ «**Զարենցը հիմնականում բանաստեղծ էր, թեւ գրել է նաեւ արձակ գործեր: Բակունցն արձակագիր էր, որի արձակ թաթախած էր թրթռուն բանաստեղծականութեամբ**»:

Յետաքրքիր է այն դիտարկումը, ըստ որի, Բակունցի ուղին արտաքուստ միակտոր է: Բակունցը երբեք ինքն իրեն չի հերքել: Նա ոչ մի բանով «**չափազանցեալ կերպով չի յափշտակւել, ոչինչ չի ժխտել սոսկ յուսառըքութեան թելադրած: Դրա պատճառը միայն այն չէ, որ նա գրական ասպարէզ մտաւ աւելի հասունացած տարիքում: Հիմնական պատճառը թաքնւած է Բակունցի խառնվածքի մէջ: Նա հաստատական էր եւ լուրջ**»:

Զորրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է Ակսել Բակունցի կյանքի եւ գրական գործունեության, նրա գրական վաստակի ու ժառանգության քննությանը: Մանրամասն ներկայացնելով գրողի կենսագրականը, աշխատության հեղինակը վերստին զուգահեռներ է տանում Զարենց-Բակունց գրական հարթության վրա: Շեշտադրվում է, որ Բակունցի գրական-հասարակական գործունեությունը շրջադարձային աշխուժություն է ստանում 1931 թվականից, երբ ընտրվում է Արտաշես Կարինյանի խմբագրությամբ լույս տեսնող «Նոր ուղի» հանդեսի խմբագրական կոլեգիայի կազմում, իսկ նույն տարվա մարտին մտնում է Հայաստանի պրոլետ-գրողների ասոցիացիայի նոր վարչության մեջ՝ Եղ. Զարենցի կողքին:

Ճշմարտացի խոսք ասելով Բակունց գրողի եւ հայրենասերի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ, գրքի հեղինակը մատնանշում է այն դժվարին խոչընդոտները, որոնք կամա ու նաեւ ակամա դրված էին

նրա առջեւ: Իսկ այն, որ Բակունցը մեծապես ազգային նկարագիր ունեցող անհատ էր, երեւում է գրքի ամբողջ շարադրանքից:

Նույնիսկ կինոյի ոլորտում գրողը հանդես է բերում իր հստակ արտահայտված ազգային հակումն ու նկարագիրը՝ ձգտելով, որ 1930-ական թթ. հայ կինոյի գործունեության ծրագրում ընդգրկվեն հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ճշմարտացի ընթացքը բացահայտող վավերագրական ու զեղարվեստական դրվագներ, ինչը, բնականաբար, մերժվում է այդ դարաշրջանի բուլշեփկյան գրաքննիչների կողմից:

Աշխատության մեջ եական ու խորին անդրադարձ կա մեծ գրողի մահվան եւ անմահության խորհրդին:

Հայ գրականության համար մահաբեր համարվող 1937 թվականից հետո Բակունցի անունն ու գործը մոռացված է անտեսված էին տասնամյակներով՝ մինչեւ երկրի ապաստալիմականացումը:

1956 թ. հոկտեմբերին Հայաստանի գրողների միությունը որոշեց կազմավորվել Բակունցի գրական ժառանգությունը հետազոտող եւ հավաքող հանձնաժողով: Մեծ թափ է ստանում գրողի վերաբերյալ արխիվային նյութերի որոնման ու հավաքման գործընթացը: Սակայն, ըստ հետազոտող հեղինակի, կոմունիստական բռնադատիչները չէին բավարարվել լոկ գրողին բանտարկելով ու մահվան մատնելով, այլ ձգտել էին «**ոչնչացնել կամ թաքցնել նաեւ նրա ձեռագրերը, գրառումները, հաւաքած նիւթերը, որպէսզի հետք չմնա նրա տակաւին չտալած բեղուն ժառանգութիւնից**»: Դա ֆիզիկական բռնություններից ավելի վտանգավոր էր:

Յետաքրքրական է, որ աշխատության հեղինակը մեջբերում էր կատարել ռուս գրաքննադատ Կարնելի Ջելինսկուց, որում հետեւալ միտքն էր. «**Մեր կուլտուրայի թշնամիները 1937 թվականին Ակսել Բակունցին տարան իր տանից, եւ նա դիմաւորեց իր մահը որպէս կոմունիստ եւ այլեւս չվերադարձաւ տուն**»:

Հայ գրականագետը սույն պնդման կապակցությամբ հետեւյալն է արձանագրում. «**Անշուշտ, Բակունցին սպանեցին հայկական եւ առհասարակ մարդկային մշակութի թշնամիները, որոնց ժառանգներն ամեն օր պատրաստ են նույն բանն անելու, բայց**

ակնյայտօրէն սխալում է Ջելինսկին, երբ ասում է, թէ Բակունցը «դիմաւորեց իր մահը որպէս կոմունիստ», քանի որ այլ բան է վկայում նրա կեանքը իր էութեամբ»:

Հինգերորդ գլխում հեղինակը քննության առնելով Բակունցի ստեղծագործության բովանդակությունն ու դիմագիծը, ընդհանրական այն եզրահանգմանն է հասնում, որ գրողի ստեղծագործության հիմնական նյութը եղել է բուն հայ ժողովրդի կյանքը եւ նա սկսել է գրել այն ամենից, ինչ որ իրեն ավելի էր ծանր:

Եվ քանի որ նրա կենսափորձն անընդհատ հարստանում էր եւ կյանքի ճանաչողությունը խորանում, ապա այդ փոփոխություններն արտացոլվում էին նաեւ յուր զեղարվեստական ստեղծագործության մեջ՝ նյութերի ընտրության եւ դրանց մշակման առումով:

Եթե սկզբում Բակունցը զբաղվում էր միայն նախախորհրդային հայ գյուղով եւ իրեն շրջապատող խորհրդային գյուղի էական տեղաշարժերով, ապա հետագայում իր ստեղծագործական շրջանածրի մեջ առավ հին եւ նոր քաղաքի կյանքը, 1930-ական թթ. հայ մարդու ապրումները, երկրի սոցիալական ու տնտեսական կերպարանափոխությունը, իսկ ավելի ուշ տարվեց ու տարածվեց դեպի պատմական ու համապարփակ թեմաները:

Լ. Սկրտչյանը քննադատում է խորհրդային գրախոսների այն տեսակետը, թէ Բակունցի նկարագրած գյուղական պատկերներից միայն հնին վերաբերող պատկերներն են տխուր, ծանր, չարքաշ կյանքի արտացոլումը հանդիսանում:

Աշխատության հեղինակը համոզված պնդում է, որ դա ճիշտ չէ. քանզի 1920-ական թվականների խորհրդահայ գյուղի պատկերը եւս պայծառ չէ: Ինքնաբերաբար իրականությունը նմանվում է հնի վատ պատկերներին:

Վեցերորդ գլխում («Արուեստի դրսեւորման առանձնայատկությունները Բակունցի երկերում») հեղինակը խտացված կերպով հետեւյալն է շարադրում. «**Եթէ գրողի երկերը իրենց բովանդակությամբ եւ նպատակասլացությամբ տոգորված են ապրող ժողովրդի իրական կյանքն ու իրական ձգտումները ներկայացնելու, կյանքի իրական ճշմարտությունը զեղարվեստական պատկերավորման միջոցով տեսանելի, շոշափելի եւ ուսանելի դարձնելու մտահոգությամբ, ապա**



«Աշոտ Խաչատրյանը ներկայացնում է»

Արդեն ավանդական են դարձել «Աշոտ Խաչատրյանը ներկայացնում է» խորագրով դասական երաժշտության համերգները, որ անցկացվեց չորրորդ անգամ անընդմեջ: Կապանի արվեստի պետական քոլեջի փոխտնօրեն Աշոտ Խաչատրյանը նման միջոցառմամբ նպատակ ունի ներկայացնելու այն երաժիշտ-կատարողներին, ովքեր ծննդով ու արմատներով այսօր էն են կամ ապրելով ու ստեղծագործելով Կապանում՝ ուրույն երանգ ու շունչ են տալիս նրա մշակութային կյանքին:

Հունիսի 3-ին Կապանի արվեստի պետական քոլեջի Վահագն Ստամբուլյանի անվան երգեհոնային դահլիճում կայացած երեկոն երաժիշտ-կատարողների հետաքրքրական կազմ էր հավաքել: Համերգային ծրագիրը սկսվեց հանդիսավարի կողմից մի հետաքրքրական դեպքի վկայակոչումով. «Մեծն երգահան Շերամը մի անգամ Անդրանիկ զորավարին ասում է. «Քեզի պես զենքով չես կռվել, բայց ոնց կհասկանամ, իմ երգն էլ զենքից պակաս չէ»: Ազգային հերոսը գրկում է երաժիշտին և ասում. «Իհարկե, երգն ու երաժշտությունը երբեմն ավելի զորեղ են»»:

Իսկ համերգը սկսվեց Ֆրեդերիկ Շոպենի դր դիեզ մինոր ետյուդով: Ստեղծագործությունը հնչեցրեց արմատներով կապանցի, երիտասարդ ու շնորհաշատ Էդուարդ Արշակյանը, ով ուսանում է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի 2-րդ կուրսում: Հաջորդ երաժիշտ կատարողը եւս երիտասարդ էր ու շնորհալի՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի մեներգեցողության ամբիոնի 2-րդ կուրսի ուսանող Նարեկ Ադամյան, ով կատարեց Վոլֆգանգ Մոցարտի «Կախարդական սրինգ» օպերայից Պապագենոյի արիան և Կոմիտասի «Հայաստանը»:

Կապանի արվեստի պետական քոլեջի դասախոս, կարճատև Գեորգ Արման Սկրոչյանը հնչեցրեց Պետրո Իտուալիեի «Չարդաշը» (նվագակցող՝ Յանն Ստեֆանյան):

Պաշնակահար Արմեն Քարամյանը նոր անուն չէ կապանցի երաժշտասերի համար. դասավանդել է Ղափանի երաժշտական ուսումնարանում: Մեծ վարպետությամբ նա հանդիսակալում էր մաուրեց Ֆրեդերիկ Շոպենի «Պրելյուդ» ռե մինոր և Սերգեյ Պրոկոֆևի «Մոլուցք» ստեղծագործությունները՝ արժանանալով երկարատև ծափահարությունների:

Հայաստանի պետական ֆիլիարմոնիկ նվագախմբի ջութակահար Վահե Փարսադանյանին առանձնապես ներկայացնե-



լու կարիք չկա: Մի քանի անգամ մասնակցել է Աշոտ Խաչատրյանի կազմակերպած երեկոներին: Այս անգամ երաժիշտը կատարեց Գերհարդ Վեյնանսկու «Իմպրովիզացիա» և Նիկոլայ Ռինսկի-Կորսակովի «Բոնի թռիչքը» ստեղծագործությունները (նվագակցող՝ Արմեն Քարամյան): Կոմպոզիտոր Գայանե Չեբոտարյանի դաշնամուրային տրիոն այս անգամ ներկայացվեց յուրօրինակ մի կազմով՝ Հայաստանի ֆիլիարմոնիկ նվագախմբի ջութակահար Սարգիս Թաշչյան, Աշոտ Խաչատրյան (թավջութակ) և Սվետլանա Համբարձումյան (դաշնամուր):

Համերգային ծրագրում ընդգրկվել էր մի կոմպոզիտորի ստեղծագործություն, ով արգենտինացի լիմեյրով, հարստացրեց տանգոյի ժանրը և առավել հասանելի դարձրեց հասարակությանը: Երեկոյի ավարտին լարային քառյակի և Կապանի երաժշտական ուսումնարանի շրջանավարտ, ակկորդեոնահար Միհրան Արշակյանի կատարմամբ հնչեցին Աստոր Պիացուլայի «Միլոնգա դե անգել» և «Եսկուալո» ստեղծագործու-

թյունները: Իսկ ամենավերջում Աշոտ Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց երեկոյի հանդիսավար Թերեզա Գալստյանին, համերգի հովանավորին՝ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերության տնօրենությանը և բոլոր այն մարդկանց, ովքեր աջակցեցին համերգի կազմակերպմանը, այդ թվում՝ Կապանի արվեստի պետական քոլեջի տնօրեն Վարդան Քոչարյանին և կրթօջախի աշխատակազմին:

Վահրամ Օրբեյան

Հայտարարություն

«Կապանի բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը աշխատանքի է հրավիրում ՀՀ քաղաքացիների՝ հետևյալ թափուր պաշտոններում աշխատելու համար:

- 1. Գրադարանի վարիչ (մասնագիտական կրթությունը պարտադիր է),
- 2. Համակարգչային օպերատոր (Microsoft Office ծրագրերին տիրապետելը պարտադիր է):

Ցանկացողները կարող են դիմել քոլեջ՝ ք. Կապան, Շահումյան 37, հեռ. 5-25-70:

Գորիսի «Ջանգեղուր տեքստիլ» ՓԲ ընկերության բաժնետերերի տարեկան հաշվետու ժողովը տեղի կունենա սույն թվականի հունիսի 11-ին:

Հասցեն՝ ք. Գորիս, Գր. Տաթևացու 5

Բաժնետերերի ընկերության խորհուրդ

Շնորհակալություն

Երախտագիտություն են հայտնում Կապանի համայնքապետ Գեորգ Փարսյանին և Արժևանիկի վարչական ղեկավար Անուշավան Հարությունյանին՝ Արժևանիկ բնակավայրի հայրենագիտական թանգարանի տանիքի նորոգման օժանդակելու համար, ինչի շնորհիվ պատմական արժեք ունեցող նյութերը փրկվեցին անդառնալի կորստից:

Էդուարդ Մանուչարյան

93-ամյա կենսաթոշակառու, թանգարանի տնօրեն Արժևանիկի պատվավոր քաղաքացի

Փոքր դրամաշնորհային ծրագրերի ներկայացման հրավեր

ՀՀ Սյունիքի մարզում գրանցված հասարակական կազմակերպությունների համար

«Պահպանվող Տարածքների Աջակցման Փոքր Դրամաշնորհային Բաղադրիչի նախարարության անունից հրավիրում մասնակցելու փոքր դրամաշնորհային Օրագիր-Հայաստան» (ՊՏԱԾ-Չ) ծրագրի (ՓԳԲ) շրջանակներում Հայաստանի է Սյունիքի մարզում գրանցված բոլոր ծրագրերի 3-րդ փուլի մրցույթին:

Օրագիր՝	«Պահպանվող Տարածքների Աջակցման Օրագիր-Հայաստան» (ՊՏԱԾ-Չ)
Հղում No՝	BMZ-N 2009.6657.2
Օրագրի դոնոր՝	KfW Զարգացման Բանկ (KfW), Գերմանիա
Դրամաշնորհ տրամադրող՝	ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունը (Օրագրի գործադիր մարմին) և ՊՏԱԾ-Չ Օրագրի Իրականացման Գրասենյակը
Պայմանագիր՝	Դրամաշնորհի/Նվիրաբերության տրամադրման
Հայտադիմումների ներկայացնելու վերջնաժամկետ	Հուլիսի 1, 2019, 18:00
Հայտադիմումների ներկայացման ձևը	Հայտադիմումները պետք է ուղարկվեն էլեկտրոնային, ինչպես նաև թղթային տարբերակներով.
Հայտադիմումների թղթային փաթեթների ներկայացման հասցեներ	ՊՏԱԾ-Չ ք. Կապանի գրասենյակ, ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, 6/1 Մ. Ստեֆանյան, Հասմիկ Խաչոյանին կամ ՊՏԱԾ-Չ ք. Երևանի գրասենյակ, ՀՀ, Կառավարության 3-րդ շենք, 5-րդ հարկ, սենյակ N 544, Մարտիրոս Նալբանդյանին
Հայտադիմումների էլեկտրոնային տարբերակների ներկայացման հասցեներ	h.khachoyan@consecord.am ; m.nalbandyan@consecord.am
Հայտադիմումների լեզու	Հայերեն

Մրցույթի մասնակցության հայտադիմումը կազմված է հետևյալ փաստաթղթերից՝

- 1. Օրագրային հայտ
- 2. Գործողությունների պլան
- 3. Օրագրի բյուջե
- 4. Հասարակական կազմակերպության գրանցման վկայականի պատճեն
- 5. Հասարակական կազմակերպության կանոնադրության պատճեն

1-3 կետերում նշված ձևաթղթերի, ՊՏԱԾ-Չ ՓԳԲ ուղեցույցի կամ այլ լրացուցիչ տեղեկատվության ձեռքբերման համար գրել ՊՏԱԾ-Չ ծրագրի սոցիալ-տնտեսական հարցերով մասնագետ Հասմիկ Խաչոյանին՝ հետևյալ էլ-փոստի հասցեով. h.khachoyan@consecord.am կամ զանգահարել +374 (0) 93 549955 հեռախոսահամարով կամ այցելել հետևյալ հղումով՝ <http://mnp.am/am/pages/225>:

«Պահպանվող Տարածքների Աջակցման Օրագիր-Հայաստան» (ՊՏԱԾ-Չ) ծրագրի մաս է կազմում Գերմանիայի Հանրապետության Տնտեսական Համագործակցության և Զարգացման Նախարարության կողմից (BMZ No: 2009.6657.2) մեկնարկված նախաձեռնության:

Սույն ծրագիրը իրականացվում է համաձայն Գերմանիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված միջկառավարական ֆինանսական համաձայնագրերի, ինչպես նաև KfW բանկի և ՀՀ Բնապահպանության Նախարարության միջև 28.05.2013թ-ին ստորագրված Առանձին Համաձայնագրի:

<h1>Սյունյաց Երկիր</h1> <p>Հիմնադիր ԵՎ ՀԻՄՆԱԳՐՎՈՂ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԹԱԿ ՊՏԱՍԽԱՄԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ</p> <p>Գլխավոր խմբագիր՝ ՍՍՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ</p>	<p>Հասցե՝ Գապան, Շահումյան 20/32: (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:</p> <p>Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am</p> <p>Ռճթակցությունները չեն գրախոսվում և չեն հրատարակվում: Ինքնազգրված և ինքնակերպարված կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):</p> <p>Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:</p>	<p>Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիրապետման» հրատարակչության տպարանում:</p> <p>Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:</p> <p>«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՅՈՒՄ» բաժնուկ տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:</p>	<p>QR կոդ</p> <p>Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 1200, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 06.06.2019թ.:</p>
-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--------------------------------------------------------------------------------------------------------------------------